14 փետր. 1906 թ. Երեւան.

«Արարատ» ամսագրի խմբագրութեան.

Պարտք եմ համարում ի գիտութիւն և ի միամտութիւն հրատարակել ի նպաստ արկածեալների հեռւեալ իմ ստացած նուիրաբերութիւնները։

Ա. Վեհափառ Հայրապետի միջոցով արկածեալների գանձարկղին հասցնելու համար անցեալ նոյեմբերի 21-ին Երևանի ս. Պետրոս և Պօղոս եկեղեցու աւագ քահանայ Տէր Յովսէփ Մելեանի թղթով ստացել եմ քսան ռուբլի (20 ռ.), որ նուիրել է Տիկին Եղիսաբէթ Յարութիւնեանը իւր ամուսին հանգուցեալ Նահապետ Յարութիւնեանցի տարելցի հոգեհանգստեան առիթով։

Այդ գումարը մատուցել եմ Վեհափառ Հայրապետին և Հայրապետական Դիւանից արժանացել ստացականի, որ տրուած է յունվարի 16-ին թ. 36։ Յամեցման պատճառը յայտնի գործադուլներն էին։

Բ. Նախիջևանի և նրա գաւառի արկածեալների օգտին Երևանում տրուած համերգի արդիւնքը — երեք հարիւր քսան և եօթն ռուբլի, երեսուն կոպէկ (327 ռ. 30 կ.) ստացայ համերգի նախաձեռնող օրիորդ Եւգինէ Մկրտչեան Տէր Սարգսեանից անցեալ դեկտեմբերի 30-ին և պետական բանկի № 113203, յունվարի 12-ին կտրոնով փոխադրեցի Նախիջևան, Հոգևոր Կառավարութեանը, այնտեղի Յանձնաժողովի ձեռքով կարօտեալներին բաշխելու։

Գ. Բաթումի հայոց ս. Փրկիչ եկեղեցու աւագ քահանայ Տէր Մեսրոպ Մելեանի միջոցով նոյն քաղաքացի Նունէ Մելեան, Զեփիւռ Կարապետեան, Արշանոյշ Զուրայեան և Նուշանիկ Պալեան տիկինների ժողոված զգեստներն ու կտորեղէնները Հ. Մեսրոպի յունվարի 9-ն գրութեան հետ ուղարկած № 006954 բեռնագրի համեմատ ստացայ յունվարի 20-ին։ Որովհետև բաշխումն իմ տրա-

մադրութեանն է թողնուած, ուստի և իրերը յանձնեցի ս. Սարգիս և Կոնդի ս. Յովհաննէս եկեղեցիների պ. Յովհաննէս Սողոմոնեան և Գէորգ Նուկզարեան երեցփոխաններին քաղաքում գտնուող եկուոր և տեղացի արկածեալներին բաշխելու։

Յիշեալ պարոնները իմ հրաւիրանքով սիրայօժար յանձն են առել քաղաքիս աղքատների համար հանգանակութիւն անելու և նպաստներ բաշխելու հոգսը, մինչև որ հարկաւոր լինի աղքատների մի խնամակալութիւն կազմակերպել։

Յայտնելով իմ խորին շնորհակալութիւնը նուիրատուներին և նուէրները հանգանակողներին։

Մնամ աղօթարար

Փոխ—թեմական Հայոց Երևանայ Յուսիկ եպիսկոպոս.